

Utmanly

Apdansk. 6 pnr 5

891.715

U-38

NOV 20 1928

Գիտրի յերաւոյ

[Redacted]



„ՀԵՐԱՄԵՍ“

1928 ՅԵՐԵՎԱՆ

ՅԼ 715
5-38

1.08
36



Այ



Գիբորը ուներ
Բազմաթիվ գրքեր
Բոլորը փոշոտ,
Անկազմ, ճղտոտած,
Անխնամ պահված,
Թերթերը պոկած:
Ուշք չէր դարձնում
Նա իր գրքերին.
Գրքերը կորչում,
Փչանում էին
Գիբորի ձեռքին:

1007
32591
248



Մի անգամ կովեց
Ընկերոջ հետ նա,
Գիբորը շարտեց
Ընկերոջ վրա, —
Գիբորը գողգովեց,
Թերթերը թռան,
Ցիրուցան յեղան,
Փչացան, կորան:

Գիշերը յեկավ,
Գիքորը քնեց:
Սենյակում իսկույն
Հռություն տիրեց:
Յեւ Գիքորն ահա
Տեսավ յերագում,
Վոր լեզու առած
Գրքերը խոսում,
Զրույց են անում
Նստած միասին
Իրենց անուրախ
Դրության մասին:—



— Լսիր, «Դոն-Քիշոտ»,
Ինչո՞ւ յես փոշոտ:
— Վհնց ես ապրում
«Շունն ու կատու»,
Մի ժամանակ
Հավ եյիր դու:
— Ե՛յ, «Ռոբինզոն» բարեկամ,
Ինչո՞ւ կեղտոտ ես այդքան:
— Ո՞ւր ե կազմդ, «Քաջ Նազար» —
Եդ ի՞նչ որի դու հասար:
— Թվաբանության դասագիրք,
Եդ ի՞նչ հազուստ ե հազիդ.
Վրադ թանաք, մի կողիդ
Նկարված ե մի մեծ քիթ
Ու գրված ե քթի տակ՝
«Յեթե գրքիս դուք ձեռք տաք —
Յես ձեր քիթը կպոկեմ»:



— Բա ի՞նչ անենք, — հարցրին
 Գրքույկները միասին:
 «Դոն-Գիշտը» թե՛ տղերք,
 Յեկեք փախչենք ուրիշ տեղ:
 Դասագիրքը ճղոտած
 Վոտքի կանգնեց ու ասաց.
 — Ինչո՞ւ փախչենք,
 Ա՛յ Դոն-Գիշտ,
 Ա՛յ դու անկազմ,
 Ա՛յ դու փոշոտ:
 Ուր ել գնանք — վիճակը մեր
 Նույնն է, ընկեր: —
 Ամեն տեղ կան չարածճի
 Յերեխաներ.
 Ամեն տեղ նրանք
 Գզգզում են մեզ,
 Ճղոտում են մեզ,
 Կեղտոտում են մեզ:



— Լսի՛ր, քիթ, ասաց
 Դոն-Գիշտը խիստ,
 Չախլ քեզ քաշի
 Ու մնա հանգիստ:
 Փախչենք գրադարան,
 Մեր տունը հանգիստ,
 Մեր տունն հարազատ:
 Այնտեղ չեն թողնի
 Վոր մեզ գզգզեն,
 Մեր գանգատները
 Այնտեղ կլսեն:
 Դե առա՛ջ, — ասաց
 Դոն-Գիշտը քաջ, —
 Ու հերթի յելան
 Գրքերը հանկարծ:

Գրքերը յեկան
 Հասան գրադարան,
 Խփեցին դռան թակը.
 Դեմ յելավ նրանց
 Հաստափոր դրացուցակը, —
 Մի հաստ, խոժոռ գիրք,
 Կաշվեկազմն հագին,
 Վոտքերը բարակ,
 Ինքը ահագին:
 — Ե՛յ, գոռաց նա, — ո՞վ է յեկել,
 Ո՞վքեր են ես աղմուկ անում,
 Ի՞նչ եք յեկել ու խռնովել՝
 Բոլորդ անկազմ ու անանուխ:



Պատասխանեց Դոն-Քիշոտը.
— Շնորհակալ ենք խոսքիդ համար,
Սակայն մենք ել կազմ ունեյինք
Նկարագարդ, սիրուն, հարմար:
Այժմ անկազմ ենք ու փոշոտ—
Իմ անունն է Դոն-Քիշոտ:

Գրացուցակը խոսքը թողեց,
Հրեց իր կազմը նա մի կողմ
Յեվ նայելով իր փորի մեջ—
Ահա, ասաց, — շարք հինգերորդ,
Համար հազար հարյուր չորրորդ:

Հենց վոր ասեց — պահարանից
Մի կաշվեկազմ գիրք թռավ ցած
Ու դառնալով Դոն-Քիշոտին՝
— Ո՞վ է արդյոք կանչում — ասաց —
Չեմ ճանաչում, պարոն, յես ձեզ,
— Իսպանացի Քիշոտն եմ յես:

— Իմ հարազատ Դոն-Քիշոտ,
Տես յես ինչքան եմ փոշոտ,—
Բացականչեց մեր Քիշոտը,
Վոր անկազմ եր ու փոշոտ եր—
Յեվ գրկեցին նրանք իրար,
Համբուրվեցին յեղբայրաբար:

Գրացուցակն ես վոր տեսավ
Դարձավ նրանց, սիրով ասավ.
— Դե հանգստացեք, սիրելի հյուրեր,
Մինչև լուսաբաց.
Յես ինքս ել գնամ մի փոքր քնեմ—
Յես ել եմ հոգնած:

Առավոտյան գրքերն ուրախ
Իրենց շուրջը նայեցին,
Միթե այստեղ գրքեր են լոկ
Ապրում խաղաղ, միասին:
Մաքուր կազմած, իրար կողքի
Պահարանում շարված խիտ,
Գրքերն ահա նայում են լուռ,
Ժպտում են գոհ ու հանգիստ:

Դասագիրքը այնքան հուզվեց,
Վոր շշնջաց գունատված՝
«Վեց անգամ վեց — յերեսուն վեց,
Հարյուր և տասն — հարյուր տասը»:



Գրքերն հանկարծ իրար անցան,
Գունատվեցին տափնապից.
Այդ ժամանակ սենյակ մտան
Ծառայողները դեմից:
Նրանք բերին ավելներ,
Սկսեցին ավելել,
Մաքրել հատակ, պատուհան,
Առատադ ու պահարան:



Վողջը մաքուր սրբեցին
Յեվ անկյունում հանկարծ մութ
Տեսան թափված գրքերի
Մի ահագին կեղտոտ կույտ:
Վոչ վերջ ունեն, վոչ սկիզբ,
Անկազմ, անկող, ճղոտած,—
Այս պատկերը վոր տեսան
Բարձրացրին ճիշ ու լաց:
— Ախ, խեղճ գրքեր,
Թշվառ գրքեր,
Ախ չար, անմիտ
Յերեխաներ—
Ի՞նչ եք արել...



Հանենք տանք ձեզ Ոհանին,
Նա ձեզ թող լավ խնամի
Մաքրի, կարի ու կազմի,
Յերեխեքից պահպանի:

Ու կազմաւանից զուրս յեկան Նրանք—
Թերթերը մաքուր, կողերին կաշի,
Յեւ թերթիկների, եջերի վրա
Վոչ թանաք կա ել, վոչ թանձր փոշի:



Դոն-Քիշոտը առջևից
Քայլում ե գոհ ու հպարտ,
Քաջ-Նազարը յետևից՝
Կազմած, մաքուր ու զվարթ:
Դասագիրքն ել ահա խիստ
Քայլում ե լուրջ ու հանգիստ:

Դրանից հետո
Բոլոր գրքերին
Ջոկեցին մեկ-մեկ,
Տեղները դրին:
Դարսեցին մաքուր
Պահարաններում,
Չար տղաների
Չեռքերից հեռու:



Իսկ Գիքորը դաս ունի՝
 Լուծելու յե մի խնդիր,
 Փնտրում է նա, վոր գանի
 Թվաբանության դասագիրք:
 Նայում է դես, նայում դեն,
 Անկողնի մոտ, դռան մոտ, —
 Գասագիրքը կորել է, —
 Ամոթ, Գիքոր, շատ ամոթ:
 Վորտեղ ես, գիրք, ուր ես, գիրք, —
 Թվաբանության դասագիրք:

Ել ուր գնա Գիքորը,
 Վորտեղ գանի նա նորը, —
 Իբ գրքերը ուր կորան...
 Պետք է գնա գրադարան:



Գիքորի փոքերն ասես թե առան,
 Գիքորը վազեց դեպի գրադարան,
 Ներս ընկավ, դիմեց, վոր գիրք տան իրեն,
 Գրքերը դեմից նայում են հրեն...
 Բայց գրքերը գայրացան,
 Հրճացին խմբովին —
 Յեվ գրքերը միաձայն
 Դուրս արեցին Գիքորին:



Գ Ի Ն Ը 7 5 Կ Ո Պ.

„ՀԵՐՄԵՍ“ ՀՐԱՏԱՐԱԿԳՈՒԹՅՈՒՆ № 9.

ՏԻՐՄԺ 1500. ԳՐԱԴԱՐԱՆ № 90Բ

ՆԿԱՐՆԵՐԸ ՏՊԱԳՐՎԱԾ ԵՆ ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ ՎԻՍՏԱԳՐԱՏԱՆԸ.
ՏԵԿՍՏԸ՝ „ՀԵՐՄԵՍ“ ՀՐԱՏԱՐԱԿԳՈՒԹՅԱՆ ՏՊԱՐԱՆՈՒՄ:
ՆԻՍՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԻ ՄԱՐԶԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ:

4090